Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖS 2019.

Ստորագրվեց «Հորս համայնքում ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցման» ծրագիրը

2020 թ. մարտի 18-ին, Հայաստանում՝ Ճապոնիայի դեսպանությունում, տեղի ունեցավ «Հորս համայնքում ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցման» ծրագրի 84,120 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Բեզոար» բնության պահպանության հասարակական կազմակերպության նախագահ, պարոն Խաչատուր Աբրահամյանի կողմից:

Ծրագրի նպատակն է Հորս համայնքում ոռոգման ջրամբարի ջրատարի կառուցումը՝ չոր սեզոնին համայնքին ոռոգման ջուր մատակարարելու նպատակով: Արդյունքում, 420 անձ օգուտ կքաղի այս ծրագրից: Ջրի աղբյուրի բարելավման տեսանկյունից, տվյալ ծրագիրը նաև կնպաստի շրջակա միջավայրի էկոհամակարգի և էկոլգիական կայունության պահպանմանը: Երկարաժամկետ հեռանկարում ակնկալվում է, որ այն նաև կնպաստի անասնապահությամբ և զբոսաշրջությամբ, ներառյալ էկոտուրիզմով զբաղվող գյուղացիների եկամուտների ավելացմանը:

Դեսպան Յամադան և «Բեզոար» բնության պահպանության հասարակական կազմակերպության նախագահ, պարոն Խաչատուր Աբրահամյանը ստորագրեցին դրամաշնորհային պայմանագիրը